ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻՑ ՀԱՅԱՍՏԱՆ ԺԱՄԱՆԱԾ ՊԱՏՎԻՐԱԿՆԵՐԸ ՎԵՐԱԴԱՐՁԱՆ

Երջանկահիշատակ Տ. Տ. Գեորգ Զ. Հայրապետի հուղարկավորության և թաղման արարողություններին մասնակցելու համար արտասահմանից Հայաստան ժամանած հոգևորական և աշխարհական պատվիրակները, հունիսի 8-ին, երեկոյան ժամը 8-ից մինչև 10-ը, «Ինտուրիստ» հյուրանոցի դահլիճում հանդիպում ունեցան մամուլի ներկայացուցիչների հետ և հիացական բառերով նրանց պատմեցին իրենց տպավորությունների մասին, որոնք կրել էին ծաղկող Հայաստանի զանազան վայրերում՝ Էջմիածնում, Գեղարդում, Դվինում, Արուճատում, Կարմիր բլուրում, Սևանում, Երևանի մշակութային հիմնարկներում, Գիտությունների ակադեմիայում, Պետական թանգարանում, պողոտաներում, զբոսայգիներում, կոլտնտեսություններում, մեծ գործարաններում և այլ վայրերում կատարած իրենց շրջագայությունների ընթացքին։

***

Հանդիպումից հետո պատվիրակները ներկա գտնվեցին այն ընդունելության, որը կազմակերպել էին Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Հայ Եկեղեցու գործերի խորհուրդը և ԱՕԿՍ-ը (Արտասահմանի հետ կուլտուրական կապի Հայկական ընկերությունը)։ Բացի արտասահմանյան հյուրերից, ներկա էին նաև հայ գրականության վետերաններ Ավետիք Իսահակյանը, Դերենիկ Դեմիրճյանը, Հրաչյա Քոչարը, պատմագետ պրոֆ.-դոկտ. Աշոտ Աբրահամյանը, հնագետ Կարո Ղաֆադարյանը, «Սովետական Հայաստան» ամսագրի խմբագիր Պատրիկ Սելյանը, պատմական գիտությունների թեկնածու Բարգեն Առաքելյանը, Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Հայ Եկեղեցու գործերի խորհրդի անդամները, ԱՕԿՍ-ի վարչության անդամներն ու աշխատակիցները, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներ, Էջմիածնի միաբան վարդապետներ և սարկավագներ, մեծահամբավ երգչուհի՝ Ստալինյան մրցանակի լաուրեատ Գոհար Գասպարյանը, վաստակավոր երգիչ Ավագ Պետրոսյանը, նշանավոր թառիստ Սողոմոն Սեյրանյանը և ուրիշներ։

Գերաշնորհ Տ. Վահան արքեպիսկոպոս Կոստանյանը «Հայր մեր»ով կատարեց երեկոյի բացումը, որից հետո ողջույնի խոսքեր ասացին Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Հրաչյա Գրիգորյանն ու ԱՕԿՍ-ի վարչության նախագահի տեղակալ Լ. Պ. Մանասերյանը։ Ապա հաջորդաբար խոսքը տրվեց հոգևորականներից՝ Խաղ, Մամբրե, Սիոն, Վազգեն և Տիրան սրբազաններին, Հայրիկ, Հայկազուն, Շավարշ և Շահե վարդապետներին, աշխարհականներից՝ Ավետիք Իսահակյանին, Դերենիկ Դեմիրճյանին, Հրաչյա Քոչարին, պրոֆ. Աշոտ Աբրահամյանին, Վահե-Վահյանին և Սիմոն Սիմոնյանին։

Գեղարվեստական անմոռանալի վայելք եղավ ներկաների համար երգչուհի Գոհար Գասպարյանի «Միծեռնակ»ը և ի հիշատակ հոգելույս Հայրապետին երգած «Ավե Մարիա»ն և «Ալելուիա»ն, երգիչ Ավագ Պետրոսյանի երկու մեներգները, թառիստ Սողոմոն Սեյրանյանի նվագած մենանվագները, Կոմիտաս աբեղայի «Երգոր բացվին» և «Հայաստան, երկիր դրախտավայր» մեներգները, ինչպես նաև Տիրան սրբազանի «Հայրենի՞ք, Հայրենի՞ք»ը։

Երեկույթը, որի վերջում արտասահմանյան պատվիրակները Կուլտուրական կապի Հայկական ընկերության վարչության կողմից տրամադրված հիշատակի նվերներ ստացան ծափահարությունների տակ, վերջ գտավ առավոտյան ժամը 3.30-ին, Վահան սրբազանի աղոթքով։

Սակավաթիվ ժամեր էին մնացել արտասահմանյան պատվիրակներին՝ Մայր Հայրենիքից բաժանվելու համար։ Նրանք դեպի Մոսկվա ինքնաթիռ առնելու էին հունիսի 9-ի առավոտյան ժամը 8.30-ին։ Եվ ահա

իրար հաջորդեցին ողջագուրումներն ու ողջերթի բարեմաղթությունները։ Հուզիչ էր պահը, բայց միանգամայն սրտապնդիչ, որովհետև մնացողներն ու մեկնողները այս խոսքն ունեին իրենց շրթների վրա. «Ցտեսություն՝ ան, հայրենի հողի վրա...»։

***

Հունիսի 9-ի առավոտյան ժամը 8.30-ին, Երևանից ինքնաթիռով Մոսկվա ուղևորվեցին Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսական տեղապահ ամենապատիվ Տ. Խաչ արքեպիսկոպոս Աջապահյանը, Հյուսիսային Ամերիկայի հայոց Արևելյան թեմի առաջնորդական տեղապահ Տ. Մամբրե արքեպիսկոպոս Գալֆայանը, Հարավային Ամերիկայի հայոց թեմերի Հայրապետական նվիրակ Տ. Սիոն եպիսկոպոս Մանուկյանը, Կիլիկիո Կաթողիկոսության Անթիլիասի Դպրեվանքի վերատեսուչ Տ. Դերենիկ եպիսկոպոս Փոլատյանը, Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց միաբանության անդամ Տ. Հայրիկ Աբրանյան և Տ. Հայկազուն Աբրահամյան վարդապետները, Կիլիկիո Կաթողիկոսության ենթակա Դամասկոսի (Սիրիա) թեմի Կաթողիկոսական փոխանորդ Տ. Շավարշ վարդապետ Գուլոմճյանը, Կիլիկիո Կաթողիկոսարանի դիվանապետ Տ. Շահե արքեպս Անճեմյանը և Լիբանանից ժամանած աշխարհական պատվիրակներ՝ Վահե-Վահյանը, Սիմոն Սիմոնյանը, Գեորգ Զաթալպաշյանն ու Պողոս Անթոյանը։

***

Հունիսի 11-ին, նույնպես ինքնաթիռով, Մոսկվա ուղևորվեց Կիլիկիո Կաթողիկոսության միաբան Տ. Գնել ծայրագույն վարդապետ Ճերեճյանը, որ անակնկալ թեթև անհանգստության պատճառով բաժանվել էր իր ուղեկիցներից։

***

Հունիսի 12-ին երեկոյան ճեպընթացով Մոսկվա ուղևորվեցին Հյուսիսային Ամերիկայից ժամանած Տ. Տիրան արքեպիսկոպոս Ներսոյանը, Ռումինահայոց առաջնորդ Տ. Վազգեն եպիսկոպոս Պալճյանը, Վահան Դանիելյանն ու դոկտ. Գրիգոր Բամբուկջյանը։

Բարի՜ ճանապարհ մեր բոլոր պատվիրակներին և հաջողությո՜ւն։

Մ. Տ. Ս.